Բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին ամառային դասընթացներին մասնակցելու համար տրվող կրթաթոշակներ

Նպատակը

- Այս կրթաթոշակները տրամադրվում են գերմանական բուհերում ամռանը կազմակերպվող լեզվի կամ երկրագիտական դասընթացներին մասնակցելու նպատակով:
- Յուրաքանչյուր տարվա սկզբում հրապարակվում է՝Ամառային դասընթացներ Գերմանիայում՞ գրքույկը, որի օգնությամբ դիմորդները կարող են նախապես ընտրեն որևէ դասընթաց, որին նրանք կցանկանային մասնակցել: Դասընթացի անցկացման վայրի վերջնական ընտրությունը կայացնում է DAAD¬ն: Առաջարկվող կուրսերի մասին տեղեկություններ կարող եք ստանալ նաև հետևյալ ինտերնետային կայքից՝ http://www.daad.de/deutschland/deutsch-lernen/sommerkurse/

Տևողությունը

- Դասընթացները տևում են երեքից չորս շաբաթ, անց են կացվում ամռան ամիսներին և գերմաներեն լեզվով:

Կրթաթոշակային վճարումներ

- DAAD-ն տրամադրում է մասնակի կրթաթոշակ 850 եվրո դասընթացի 7 կացարանի համար, ինչպես նաև Գերմանիա մեկնելու ճանապարհածախսը:
- Կացարանի խնդիրը որպես կանոն կարգավորում է դասընթացը կազմակերպող կողմը:

Դիմելու համար անհրաժեշտ պայմանները

- Դիմել կարող են բոլոր ֆակուլտետների ուսանողները, ովքեր կրթաթոշակը սկսվելու պահին ամենաքիչը երկու տարի ուսանած կլինեն բուհում:
- Դիմորդները պետք է ունենան գերմաներեն լեզվի լավ իմացություն և ի վիճակի կլինեն հետևել դասախոսություններին և մասնակցել խմբակային աշխատանքներին:
- Կրթաթոշակը սկսվելու պահին դիմորդների տարիքը չպետք է լինի 18 տարեկանից ցածր:
- Յուրաքանչյուր դիմորդի թեկնածությունն իրար հաջորդող երեք տարիների ընթացքում կարող է դիտարկվել միայն մեկ անգամ:
- Դիմել կարող են բոլոր այն ուսանողները, ովքեր դիմելու պահին գտնվում են բակալավրիատի 1, 2, 3, 4 կուրսերում/*բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողները պետք է ներկայացնեն տեղեկանք, որ նրանք շարունակելու են իրենց կրթությունը մագիստրատուրայում*/, մագիստրատուրայի 1-ին, օրդինատուրայի 1 կամ 2 կուրսի ուսանողները, եթե այն ավարտական չէ համարվում դիմորդի համար:

Դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերը

- Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել 3 օրինակից՝ 1 բնօրինակ և 2 պատճե
- Դիմումի ձև՝ լուսանկարով (3 լուսանկար, դիմումի ձևը պետք է լրացնել on-line)
- Կենսագրություն (CV)
- Հիմնավորում
- Մասնագետ¬դասախոսի կողմից տրված երաշխավորագիր՝ համապատասխան բլանկի ձևի վրա/ տես ինտերնետային կայքում
- Ընտրված կուրսի վերաբերյալ տեղեկություններ համապատասխան բլանկի վրա/ տես ինտերնետային կայքում
- Ստուգարքային գրքույկի պատճենը և թարգմանությունը
- Գերմաներենի իմացության վկայական (On DaF, Test DaF, DSD, DSH, ինչպես նաև Գյոթե ինստիտուտի կողմից ճանաչված համապատասխան վկայականները): Եթե վկայականը դեռ առկա չէ, ապա դիմորդը պետք է ներկայացնի On DaF –ի գրանցման թերթիկը: On DaF –ի քննությունը DAAD-ի դիմորդների համար անց է կացվում անվճար հիմունքներով:

Դիմումներն ընդունվում են մինչև սույն թվականի հոկտեմբերի 31-ը:

Գերմաներեն լեզվի քննությունը տեղի կունենա նոյեմբեր ամսին փաստաթղթերի հանձնումից հետո:

DAAD տեղեկատվական կենտրոն

Սարմենի 82, 0019 Երևան * Հեռ./Ֆաքս՝ +37410/ 58 25 15 * E-Mail: info@daad.am